ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԻՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ, Նախիջևանի կոթողային ճուշարձաններն ու պատկերաքանդակները, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ու օգտագործման գլխավոր վարչություն, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987, 398 էջ, 459 լուսանկար։

Պատմական Հայաստանի Նախճավան, Գողթն, Երնջակ, Ճահուկ գավառների ճարտարապետական և մեմորիալ հուշարձանները բավական կարևոր են միջնադարյան հայ արվեստի և ընդհանրապես մշակույթի պատմության համար։ Սակայն, ցավոք, XIX դ. վերջին և XX դ. սկզբին լույս տեսած Ղ. Ալիշանի, Ե. Լալայանի, Մ. Սմբատյանի, Գ. Հովսեփյանի ընդհանուր բնույթի աշխատություններում այդ գավառների նշանավոր հուշարձաններին նվիրված էջերը մինչև 1970-ական թվականները մնում էին նրանց մասին միակ աղբյուրը։ Դա բացատրվում է մի շարք պատճառներով, որոնցից գլխավորը այդ շրջանների հայկական ճարտարապետական կոթողների դժվարամատչելի լինելն էր ուսումնասիրության համար։ Եվ սովետահայ մասնագետներն ու ընթերցող հասարակությունը Ա. Այվազյանին են պարտական Նախիջևանի ԻՍՍՀ-ի տարածքում կանգուն հայկական բերդերի, եկեղեցիների, խաչքարերի, գրչության կենտրոնների հետազոտման և նյութերի հրապարակման համար։ Հեղինակը՝ ծննդյամբ այդ երկրամասից, հնարավորություն է ունեցել վերջին երկու տասնամյակի ընթացքում անձամբ ուսումնասիրելու, չափագրելու ու լուսանկարելու միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում կարևոր դեր խաղացած Նախիջևանի ԻՍՍՀ-ի տարածքի բնակավայրերն ու վանքային համալիրները, եկեղեցիներն ու կոթողները։ Սկզբում դիտական ամսագրերում առանձին հոդվածներով, ապա գրքերով Ա. Այվազյանը մեզ ծանոթացրեց հայ արվեստի ու ճարտարապետության մի ինքնատիպ ու խիստ հետաքրքրական դպրոցի նվաճումներին, փաստորեն վերացնելով մեր մշակույթի պատմության մեջ մի «սպիտակ բիծ»։

Ա. Այվազյանի առաջին գրքերը վերաբերում էին պատմական Հայաստանի այդ երկրամասի հուշարձաններին ընդհանրապես։ Դրանք են «Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1978), նույնը ընդարձակված և վերամշակված ռուսերեն (Երևան, 1981), «Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները։ Համահավաք ցուցակ» (Երևան, 1986) գրքերը։ Այժմ արդեն հեղինակը աշխատանք է տանում նյութի ավելի խոր ուսումնասիրման ուղղությամբ, նեղացնելով հետազոտման շրջանակները, մենագրություններ նվիրելով առանձին հնավայրերին կամ արվեստի ժանրերին։ Այդպիսին են նրա «Ագուլիս» և «Ջուղա» գրքերը (երկուսն էլ 1984 թ.) և այս վերջինը՝ գրախոսվողը, նվիրված արդեն Նախիջևանի կոթողներին ու քանդակագործական արվեստին։

Այս մեծածավալ և հարուստ պատկերազարդված գրքում նյութը խմբավորված է չորս գլխում՝ ըստ պատմական գավառների։ Առաջաբանում համառոտ տրվում է Նախիջևանի ԻՍՍՀ-ի տարածքի հնագիտական ուսումնասիրության պատմությունը, որտեղ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Կարմիր վանքի բրոնզեդարյան և Ալիշարի ուրարտական մշակույթի գտածոները։ Ներածականում տրված է Նախիջևանի տարածքի խաչքարերի, պաշտամունքային կառույցներում հանդիպող պատկերաքանդակների ու հարդարանքի, զարդամոտիվների համառոտ ուրվագիծը։ Առաջին գլուխը, նվիրված Գողթնի հուշարձաններին, սկսվում է պատմական Մեսրոպավանի մոտ գտնվող Նավասարի ժայռապատկերներից։ Առաջին հայացքից կարող է համոզիչ չթվալ մեր թվարկությունից դարեր և հազարամյակներ առաջ կերտված, մարդկության այս հնագույն արվեստի գործերը հայ ժողովրդի մշակույթին նվիրված գրքում ներկայացնելը։ Սակայն ադրբեջանցի գիտնականների մի պատահական հայտնագործություն, որքան էլ տարօրինակ է, գալիս է հավաստի որոշելու Նավասարի ժայռապատկերները ստեղծողների ազգային պատկանելությունը։ 1972 թ. «Вокруг света» ամսագրի 5-րդ համարում տպագրված է Վ. Ալիևի հաղորդումը «Հնագույն գիր» վերնագրով, որտեղ հայտնվում է Նախիջևանի ԻՍՍՀ-ի Օրդուբադի շրջանի Նասիրվաշ գյուղի մոտակա ժայռերին Ադրբեջանական

ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտարշավի ժամանակ ուսումնասիրված ժայռապատկերների կողքին, «հնագույն գրի-պատկերագրի կամ գաղափարագրի» հայտնագործման մասին։ Բարեբախտաբար, ապված են նաև ժայռապատկերների լուսանկարները այդ «խորհրդավոր» նշանների հետ, որտեղ պարզորոշ կարդացվում է ՏՐ ՅՍ (Տեր Ցիսուս) մակագրությունը։ Մի կողմ թողնենք հոդվածի պատմական գիտությունների թեկնածու հեղինակի անտեղյակության փաստը հարևան ժողովրդի այբուբենի վերաբերյալ։ Հայերեն այս մակագրության հայտնաբերումը ունի երկու կարևոր նշանակություն. առաջին, Նախիջևանի տարածքի ժայռապատկերները ստեղծվել են հայերի կողմից, երկրորդ. պետք է ընդհանրապես վերանայել ժայռապատկերների թվագրման հարցը և ընդունել, որ դրանք շարունակվել են փորագրվել ամենաուշը մինչև վաղ միջնադար։ Ինչ վերաբերում է հիշյալ «նասիրվազ» գյուղին, ապա դա վերանվանված հին հայկական բնակավայր Մեսրոպավանն է, որտեղ դեռ կա կիստվեր ս. Մեսրոպ Մաշտոց վանքը։ Ըստ Կորյունի հաղորդած տեղեկության Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո մեկնում է Գողթն, իր դաստակերտը։ Մեսրոպավանի վանքի հիմնադրումը նույնպես կապում են Մաշտոցի հետ։ Հետաքրքրական է, որ ավանին հարևան նավասարում կա քարայր, որն ավանդաբար անվանվում է «Մեսրոպ Մաշտոցի անձավ»։ Այս ուղղակի և կողմնակի փաստերի հիման վրա կարելի է նույնիսկ մի գայթակղիչ վարկած առաջադրել. Նավասարի ժայռապատկերների մի մասը փորագրող և հայերեն մակագրությունը թողնող հայ հովիվները աշակերտել են անմիջապես հենց իրեն՝ հայ առաջին ուսուցչին։

Առաջին գլխում, Մեսրոպավանից բացի, ներկայացված են Գողթնի այնպիսի կարևոր հուշարձանախմբեր, ինչպիսիք Ագուլիսը, Ցղնան, Փառական և այլն։ Սրբ Ադուլիսի վանքերն ու եկեղեցիներն իրենց ուշագրավ քանդակներով ու որմնանկարներով արդեն հայտնի էին մասնագիտական գրականության մեջ, ապա Ցղնայի ս. Աստվածածին եկեղեցու խիստ յուրօրինակ հարթաքանդակներն ու բարձրաքանդակները, ամենատարբեր պատկերագրական թեմաներով՝ իսկական հայտնություն են։ Այսպես, օրինակ, Ցղնայի եկեղեցու զանգակատան պատի Խաչելության և Աստվածածնի խորաքանդակները այնքան ցցուն են, որ համարյա դառնում են ազատ քանդակ։ Կատարման տեխնիկայով և ոճով դրանք այդ դարերի հայկական արվեստում եզակի են։ Ուշագրավ են նաև Ռամիսի եկեղեցու պատերին ագուցված Աստվածածնի քանդակը մանուկ Քրիստոսը գրկին, Փառակայի ս. Հակոբ Հայրապետ եկեղեցու զարդանախշերը։ Այս նյութերը զգալի հարստացնում են ուշ միջնադարի հայ արվեստի պատմությունը, ստիպում վերանայելու մի շարք տեսակետներ XVII—XVIII դդ. հայկական բանդակագործության ոճական ուղղությունների վերաբերյալ։

Հաջորդ գլխում ներկայացված հուշարձաններից հետաքրքրական են Շոռոթի ս. Հակոբ եկեղեցու Աստվածածնի, ինչպես նաև Նորաշենի եկեղեցու ավետարանիչների հարթաքանդակները, Աբրակունիսի ս. Կարապետ վանքի արևմտյան ճակատի արձվաքանդակը, որը խիստ ոճավորված է և զգալի տարբերվում է Սյունիքի XIII—XIV դդ. մեզ հայտնի համանման քանդակներից։ Այս գլխի պատկերազարդման մասում մեծաքանակ բարձրորակ գունավոր և սևսպիտակ լուսանկարներով (մոտ 50) ներկայացված է համաշխարհային արվեստի մի այնպիսի եզակի հուշարձանախումբ, ինչպիսին Ջուղայի գերեզմանոցն է։ Սակայն տեքստային մասը բավական համառոտ է և չի համապատասխանում Ջուղայի կոթողների նշանակությանը և նյութի առատությանը։ Հավանաբար, հեղինակը նկատի է ունեցել, որ Ջուղայի խաչքարերի մասին արդեն առանձին տպագրած մենագրություն ունի։

Նախիջևան քաղաքին և Աստապատի Կարմիր վանքին նվիրված փոքր գլխից հետո գիրքը եզրափակում է Շահապոնքի (Ճահուկի) հուշարձանները պարունակող վերջին՝ չորրորդ գլուխը։ Այստեղ առաջին անգամ հրատարակվում են Օձոփի, Ագարակի, Գոմերի, Կժաձորի. Շահապոնքի (Ճահուկի) երբեմնի հայաբնակ գյուղերի գերեզմանոցների խաչքարերը և պատկերքանդակներով տապանաքարերը, որոնց մեծ մասն ունեն այդ գավառների պատմությունը լուսաբանող արժեքավոր արձանագրություններ։

Գրքում ներկայացված հարյուրավոր խաչքարերի ու տապանաքարերի զգալի մասը պատկանում է ուշ միջնադարին՝ XV—XVII դդ.։ Սակայն միանգամայն նորույթ էր խաչքարերի արվեստի ձևավորման ժամանակաշրջանի՝ X—XI դդ. թվագրված բազմաթիվ կոթողների առկայությունը Նախիջևանի ԻՍՍՀ-ի տարածքում։ Ինչ վերաբերում է Գողթնի ու Երնջակի պատկերքանդակներին ու շենքերի հարդարանքի բաղկացուցիչ մասը կազմող զարդանախշերին, ապա դրանք իրենց առանձնահատկություններով հաստատում են գրականության մեջ արդեն առաջ քաշված այն տեսակետը, որ ուշ միջնադարում գոյություն է ունեցել հայկական ճարտարապետության Նախիջևանի դպրոց։ Ուշագրավ է նաև Աստվածածնի պատկերքանդակների տա-

բածված լինելը Նախիջևանի հուշարձաններում։ Նման երևույթ հայկական արվեստում հանդիպում է XIV դ. Սյունիքում։ Հավանարար, այս երկու փաստերի միջև ժառանգորդական կապ գոյություն ունի, որի բացահայտման համար լրացուցիչ ուսումնասիրություն է անհրաժեշտ։

Ա. Այվազյանի նոր գիրքը աչքի է ընկնում նաև հրատարակության բարձր որակով՝ ամբողջովին տպագրված է կավճապատ թղթի վրա, ունի ճաշակով ձևավորում (պետք է նշել, որ գեղարվեստական և տեխնիկական խմբագրումը իրենը՝ հեղինակինն է), պարունակում է հարյուրավոր գունավոր լուսանկարներ, ունի ռուսերեն և անգլերեն ամփոփումներ (սակայն թերություն է այդ լեզուներով լուսանկարների ցանկերի բացակայությունը)։ Մի խոսքով, բավարարված են այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ և պարտադիր են արվեստին նվիրված գրքի տպագրության համար, որը, ցավոք, խիստ հազվադեպ է հանդիպում մեր հանրապետության հրատարակչական գործի պրակտիկայում։

Աշխատանքը զերծ չէ խմբագրական բնույթի թերություններից և վրիպումներից։ Այսպես, օրինակ, հեղինակը գրում է, որ Նախիջևանում «խաչքարերը կանգնեցվել են 4—5-րդ դարերից» (էջ 16), կլոր հորինվածքով խաչքարերը ստեղծվել են V—VII դդ. (էջ 52)։ Բայց խաչքարը, որպես փոքր ճարտարապետական որոշակի ձև (ուղղաձիգ կանգնեցված քարե սալ խաչի բանդակով), ձևավորվել է IX դարում, թեպետ հավանական է, որ առաջին օրինակները կարող էին երևան գալ VIII դարից սկսած։ Ինչ վերաբերում է վաղ միջնադարին, ապա V—VII դդ. Հայաստանում կերտվել են ազատ կանգնած թևավոր խաչեր, որոնք, սակայն խաչքար չեն հանդիսանում։ Խոյաձև տապանաքարերի կիրառման սկիզբը համարվում է XII—XIII դդ. (էջ 23), սակայն այսպիսի թվագրման համար փաստեր չկան, և դրանք ավելի ուշ շրջանի մեմորիալ արվեստի զարգացման արգասիք են։ Համոզիչ չեն մի շարք խաչքարերի թվագրումը (էջ 40, 56—58, 62)։ Չի հիմնավորվում Ռամիսի XVII դ. եկեղեցու Աստվածածնի քանդակի թվագրումը XV դարով (էջ 41)։ Կան պատկերագրական վրիպումներ։ Ագուլիսի ս. Թովմայի վանքի պատին Պետրոս առաքյալը ձեռքին ոչ թե կշեռք, այլ բանալիներ ունի բռնած (էջ 30), Ծղնայի ռ. Աստվածածին եկեղեցու մուտքի վերևում քանդակված առաքյալներից Պետրոսն է բանալիներով, իսկ Պողոսը՝ գավազանով, այլ ոչ հակառակը (էջ 36)։ Ագուլիսի ս. Քրիստափոր եկեղեցու պատի բարձրաքանդակը վաղ միջնադարյան հանրահայտ «Բարի հովվի» պատկերագրությունն է (էջ 33), որը, ի դեպ, բացառիկ է հայ քանդակագործական արվեստում։ Ծղնայի եկեղեցու արևմտյան պատի քանդակը պատկերում է Քրիստոսի մկրտության տեսարանը, և նրա աջ կողքին կանգնած անձնավորությունը Հովհաննես Մկրտիչն է, իսկ ձախ կողմում՝ Հորդանան գետի խորհրդանշանը։ Ի դեպ, լուսանկարից երևում է, որ այդ քանդակը ստեղծվել է եկեղեցու կառուցման հետ միաժամանակ (XVII դար) և չի կարող ավելի վաղ կերտված լինել (էջ 37)։ Ճիշտ չէ այն արտահայտությունը, թե Ծղնայի պատկերաքանդակները «հարազատ են» ս. Թադեի վանքի քանդակներին։ Պետք է հակառակը ասել, որովհետև վերջիններս ավելի ուշ՝ XIX դ. են ստեղծվել (էջ 39)։

Նշված թերությունները չեն նսեմացնում գրքի անվիճելի արժանիքները։ Ամփոփելով վերոգրյալը, կարելի է վստահ ասել, որ Ա. Այվազյանի նոր գիրքը հիրավի մի ավանդ է հայ միջնադարյան արվեստի ուսումնասիրման կարևոր գործում։

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ
Ճարտարապետության թեկնածու